

ըռւ միութիւն մ'է. վերը՝ պայծառութեան, լոյսի և որոտնեւոր մէջ՝ Աստուծոյ ձայնը կը լսուի, մինչդեռ վարը զարհուրանքը, տաճնապը, երկիւղը տիրեր է։ Աւտայայտիչ, խոսուն են ամենուրեք ղէմքերը, կ'աղաղակեն՝ կը զգաս, բայց չես լսեր... Թերի միացած մասը՝ ջանացեր է լրացընել Յուլիոս Հոտմայեցիին, բայց ի զուր. հիմայ այդ նկարին գոյներուն մէջ՝ որքան բրտութիւններ, անյարմարութիւններ որ կան՝ այս վերջին անվարժին արդիւնքն են...

«Տիրամայրը» իր ուրիշ մէկ նկարն է, զոր հոս կը ներկայացնենք. զգացումով և արտայայտութեամբ լի գործ մը. հոս կը տեսնուի ընտանեկան սիրոյ և կապերու քաղցրութեան ճշգրիտ պատկերը։ Աննա այցելութեան եկեր է իր դուստրին Մարիամու տունը. իր թոռնիկն Յիսուս տեսնելով իր մամը՝ ինչպէս կ'ուրախանայ, կը խայտայ. մօրը զրկէն կ'ուզէ մա-

մուն զրկին մէջն անցնիլ։ Տեսէ՞ք պառաւր, կը ցնծայ թոռնիկին չարանճիւղութեան վրայ, կ'ուզէ համբուրել, ձեռքերը երկընցուցեր է իր զրկին մէջն առնելու համար փոքրիկը։

Ռաֆայէլ՝ ճշմարիտ կերպով խորշումած պառաւ մը կը ներկայացնէ, բոլոր դէմքը զծաւոր, վերիվայր էլէէնեւորով, կոծիծնեւորով. կզակը երկարած, ականջներուն ծայրերը ուռած և վար կախուած... կաւարեալ պառաւ մը։

Անաբաբեանոր ակնարկ մը՝ Պաֆայէլի գործընդուն մէկ քաջօրին համադրոտ տեսութիւն մը՝ իր արուեստին, խորհելու կերպին, զգացումներուն՝ զաղափարնէն։ Այդպիսի մեծ հաճմարի մը երկերը բոլոր աշխարհը յիշեցնած են, և զերթէ խալիլի ամէն քաղաք՝ կը պահէ այդ հրաշագործին ամենափոքր իսկ երկը՝ իրրեւ անգին զանձ մը...

ՊԱՐԹԵՆԻԿ

Մեր ազգին կեանքին եւ յաւաքաղիմութեան գործունէութեան վրայ պայծառ եւ շահեկան տեղեկութիւններ բովանդակող թերթ մ'է Արարատ ամսագիրը, որ 4 տարիներէ ի վեր զմայելի յարատեւութեամբ կը հրատարակուի եւ լինատին Հայոց Միացեալ Բնկերութեան՝ պատշտութեանը կը ձեւանէ, խմբագրապետ եւ նախագահ ունենալով Գնդապետ Գ. Մ. Գրիգորի լուրջ անձնաւորութիւնը։

Անգլիագէտ հայորդւոց քերականութիւնը լատինագրութիւնով եւ անգլիական ազգերու մէջ տարածելով «A R A R A T»-ը, գիտնալով որ զբաղան եւ պատմական ճիշտ հաւաքածոյի մը համար տրուած դրամի՝ շահաբերուած ըսել է։

Ներկայ տարուան Յունուարի Թիւն կողքը՝ Վ. Յակոբեան հարտարապետը նկարած է։ Կը ներկայացնէ հայկական հարտարապետութիւնն յիշեցնող կամարակապ մի, որուն խարսխի վրայ փորագրուած է «ՏԷՐ ԿԵՅՈ ԴՈՒ ԶԼՅՍՍ»։ Կամարակապին խորքը հարատուուն կանգնած է Ս. Էջմիածնի տաճարը. կողքին երկրորդ էջը զբաւած է անգլիերէն Թրքահայաստանի քարտէսը։

Ուսանողական յօդուածներու գլխաւորներն են.

Բնագիտական հետազոտութիւններ. — Կայտնութեան Հայաստանի մէջ. — Հաստատարի Պատմութեանը. — Arnold Joseph Tovynbe. — Կապուտ գիւղը և նորանոր հաստատութեանը քարտէսագրութեանը. — Խաւանական կուս. վարչութիւնի Բրիտանիոյ վրայ. — Հայաստան և խաղաղութիւն. — Հայ Պաշտպան մը Արեւմտիք. — Հայկական Դատարարականութիւն ի Հնդկաստան. — Հայ Որբերու համար Աւարկանք. — Հայ Գաղութականաց Նպատի Կրթագրար. — Հայկական Կարմիր Խաչի և Նպատի Գործը. — Գրական թանկ. — Էսայի, Էսայի, 60է աւելի մանրատու էջերու մէջ ամփոփուած։

Տարեկան բաժնեգլխին է 6 շիլլինգ։ Գլխի՝ Hon. Editor «Ararat». The Armenian United Association of London, 47a, Redcliffe Sp. LONDON, S. W.

1. Քարեքաղց առիթը պիտի ունենանք՝ այն ազգագուտ Բնկերութեան մասին Բազմակից մէջ տեղեկութիւններ տեղեկացնելու։